

Ամենայն Հայոց Հայրապետին, ու կաթողիկոսական իշխանութեան յատկանիշները մէկն է: Կոնսիստորիան և սինոդը, Վերջինիս անունով տուած հայրապետական կանոնական ս. կոնդակով արտօնուել են թոյլ տալ արենակցական եօթներորդ աստիճանի և խնամէական հինգերորդ աստիճանի պսակներ միայն: Իսկ իւրաքանչիւր անգամ, երբ հարկ է լինում աւելի մօտ աստիճանների պսակներ թոյլ տալ, դիմում են Ամենայն Հայոց Հայրապետին, որը կշռելով հանգամանքները կամ մերժում է և կամ իրը բացառութիւն թոյլ է տալիս պսակել, յատկապէս իւրաքանչիւր այդպիսի դէպքի համար կոնդակ տալով՝ պատշաճաւոր իշխանութեանց անունով: Հոգեւոր կառավարութեան մասին աւելնորդ է ասել, որ նոյնիսկ եօթներորդ աստիճանի թոյլ տալու ամեն այդպիսի դէպքում միշտ դիմում է կոնսիստորիաներին: Սօսելով կնքահայրութեան ¹⁾ մասին, դարձեալ սխալի մէջ է ընկնում պ. Լալայեան, ասելով որ կնքահայրութիւնն այլևս չհաս չէ: Կնքահայրութիւնը ինչպէս առաջ, այնպէս և այժմ չհաս է—քաւորն իր սանիկի հետ չի կարող պսակուել, այդպիսի պսակի թոյլտուութիւն չի լինի, ինչպէս և չի եղել:

ԱՐՄ. Վ. ՂԱՏՃԵԱՆ

Հայոց եկեղեցական իրաւունքը. ա. գիրք. ներածութիւն և աղբիւրներ. աշխատութիւն Ն. Վ. Մելիք—Թանգեանի, 1903 թ., Չուշի:

Այս գիրքի հեղինակը յանձն է առել մի պատասխանատու աշխատանք՝ ուսումնասիրել հայոց եկեղեցական իրաւունքը այն պատմական աղբիւրների հիման վրայ, որոնք այս կամ այն առնչութիւնը ունին հեղինակի ընտրած նիւթի հետ: Մեր եկեղեցական մատենագրութեան մէջ դա առաջին քննական փորձն է և մենք չենք ծածկում, թէ ռըքան լուրջ գիտական պատրաստութիւն է հարկաւոր վերոյիշեալ նիւթը—չենք ասում ամբողջապէս—գէթ որոշ չափով լուսարանելու համար: Մինչև այժմ միայն մասնաւոր փորձեր են եղել ուսումնասիրելու հայոց եկեղեցական իրաւունքին վերաբերեալ աղբիւրները՝ ինչպէս հայր Վահան Բաստամեանի հետազօտութիւնը Մխիթար Գօշի դատաստանագրքի մասին, Տէր Արեստակէս արքեպ. Սեդրակեանի քննական տեսութիւնը մեր եկեղեցու ամուսնական օրէնքների մասին և այլն: Մեր կարծիքով խնդիրը իր ամբողջու-

¹⁾ IV գիրք, 67 երես:

Թեամբ ընդգրկելու համար պէտք էր նախ՝ սկսել պատմական աղբիւրների հետազոտութիւնից և մեկնութիւնից, քանի որ մեզ հասած զանազան եկեղեցական յիշատակարանները, կանոնագրքերը և աւանդութիւնները տակաւին հում նիւթ են ներկայացնում հայ եկեղեցագիտութեան համար. որքան մութ, խրթին և անիմաստ կէտեր կան նրանց մէջ, որոնք կարօտ են հիմնական հետազոտութեան, իսկ տգէտ ընդօրինակողների եղծումները հօ անթիւ, անհամար... այդպիսի պայմաններում դիւրին է ամեն քայլափոխում սայթաքել եզրակացութիւնների և ընդհանուր սկզբունքների որոշման մէջ. իսկ պատմական նիւթի վաւերականութիւնը ստուգելու համար գիտութիւնը անզօր չէ. նա ունի միջոցներ, որ տալիս է հետազոտութեան քննական-բաղդատական մետոդը. այդ ուղղութեան է հետևում այժմ մեր նորագոյն քննական մատենագրութիւնը, որի շնորհիւ անցեալում հարազատ ճանաչուած աղբիւրները, լուրջ քննադատութեան ենթարկուելով, հերքուեցան իրանց ստուգութեան մէջ: Բայ ի՞նչ է հայոց եկեղեցական իրաւունքը, եթէ ոչ մի սպիտակ թերթ, որի վրայ կարելի է ամեն ինչ գրծագրել ad libitum... ինքը հեղինակը հեռու չէ այդ կարծիքից: «Մեզ համար, ասում է նա, բոլորովին մութ են այն խնդիրները, որոնք վաղուց պարզուած են միւս ազգերի համար. ի՞նչ ժողովներ ենք ընդունում, ի՞նչ կանոններ, որոնք են մեր եկեղեցական իրաւունքի աղբիւրները, ի՞նչով է ղեկավարւում մեր սինոդը եկեղեցական խնդիրները որոշելիս. այդ բոլորը մթութեան և խաւարի քողով է պատած (էջ 22).» հետևապէս հայոց եկեղեցական իրաւունքի ընդհանուր ղեկավարող սկզբունքները որոշելու համար, պէտք է նախ և առաջ դիմել եկեղեցական աղբիւրների քննական մեկնութեան, պարզել այն բազմաթիւ հակաճառութիւնները, որոնք նսեմացնում են պատմական նիւթի հարազատութիւնը: Այդ տեսակէտից հեղինակի աշխատութեան ա. գիրքը բաւարար չէ կարելի համարել: Նա եկեղեցական իրաւունքի մշակման ծրագիրը բաժանում է երեք մասի. առաջին գրքում նա զետեղել է ընդհանուր և մասնաւոր աղբիւրները՝ այսինքն 3 տիեզերական և 6 տեղական ժողովները, հայոց ազգային ժողովները, կաթողիկոսների կարգադրութիւնները, ապա 1836 թւի *положение*-ն և 1861 թւի հայոց ազգային սահմանադրութիւնը (առ այժմ այս առաջին գիրքն է հրատարակուած): Երկրորդ գրքում նա խոստանում է տալ հայոց եկեղեցական իրաւունքի տեսութիւնը, այսինքն՝ արձանագրել այն ընդհանուր սկզբունքները և օրէնքները, որոնք բղխում են մեր եկեղեցական աղբիւրներից, և երրորդ գրքում

նա պիտի տայ մեր եկեղեցու գործադրուող օրէնքները (дѣйствующее право) համեմատութեամբ միւս եկեղեցիների կանոնների և եկեղեցական իրաւունքի հետ:

Հեղինակի ա. գրքի ներածութիւնը ինչպէս և ընդհանուր աղբիւրների վերաբերեալ նկատողութիւնները գրուած են ուսուստուածաբանների խիստ ազդեցութեան տակ. կան ընդարձակ հատուածներ, որոնք գրեթէ ամբողջապէս ընդօրինակուած են այդ աղբիւրներից. առանձին սիրով հեղինակը քաղուածքներ է անում՝ Соколовъ-ի և архиманд. Іоаннъ-ի գրուածքներից, որոնք 1874 և 1851 թ. թ. հրատարակութիւններ են^{*)}. զարմանալի է միայն, որ եւրոպական եկեղեցական գրականութեան աղբիւրները միանգամայն ուշադրութեան չեն առնուած. մի երկու տեղ միայն յիշատակուած են գերմանական պրոֆէսսորների անունները, այն էլ պրոֆ. Соколовъ-ի ցուցմունքով և ոչ ինքնուրոյնաբար (էջ. 21), այն ինչ եկեղեցագիտութեան փիլիսոփայական և իրաւաբանական մասնաճիւղերը աւելի բազմակողմանի են մշակուած Գերմանիայում, քան որևէ ուրիշ տեղ և այդ նիւթի մասին գրողը պէտք է գլխաւորապէս աչքի առաջ ունենար եւրոպական գրականութեան նորագոյն երկերը և ոչ թէ այնպիսի գրուածքներ, որոնք աւելի քան 50 տարի առաջ հրատարակուած են, ինչպէս Опытъ церковнаго законоуѣдѣнія архиманд. Іоанна: Հեղինակը առաքելական կանոնների, նաև տիեզերական ազգային եկեղեցական ժողովների որոշումների առիթով տալիս է համառոտ տեղեկութիւններ և տեղտեղ մեկնութիւններ, որոնք սակայն աւելի վերաբերում են եկեղեցական պատմութեան քան եկեղեցու կանոնական thesis-ների պատմական զարգացման. աշխատութեան այդ մասը թոյլ է արտայայտուած:

Հայոց եկեղեցին ժողովրդական է թէ ոչ. թէպէտ այդ խնդիրը ոչ մի տարաձայնութիւնների առիթ չպիտի տար, քանի որ նա եղել է և է ժողովրդական, սակայն ժամանակ առ ժամանակ մեր հոգևոր հիմնարկութիւնները իրանց պաշտօնական յարաբերութիւնների մէջ ժխտել են մեր եկեղեցու այդ դարևոր և ամենանուիրական սկզբունքը:

Ն. վ. Մէլիք-Թանգեանը իր աշխատութեան մէջ մի շարք պատմական փաստերի հիման վրայ հաստատում է հայոց եկեղեցու գոյութեան և կենսունակութեան այդ ղեկավարող սկզբունքը. շատ հետաքրքիր են այդ կողմից այն բազմաթիւ վկա-

*) Церковное право ордин. проф. Н. К. Соколова.
Курсъ церк. законов. архим. Іоанна.

յութիւնները, որ հեղինակը իր գրքում առաջ է բերում (էջ. 360, 444, 448, 467)։

Ն. Վ. Մէլիք-Թանգեանը հայոց եկեղեցական աղբիւրների շարքում գետեղել է ռուսահայերի համար 1836 թւին հրատարակուած *положение*-ն և 1861 թւի թիւրքահայոց ազգային սահմանադրութիւնը։ Այդ դասաւորութիւնը մեր կարծիքով սխալ է, քանի որ վերոյիշեալ կանոնադրութիւնները պատկանելով մեր եկեղեցու գործադրուող օրէնքների շրջանին, պէտք է մտնէին հեղինակի աշխատութեան երրորդ գրքի մէջ, ուր նա խոստանում է տալ հայոց եկեղեցու գործադրուող օրէնսդրութիւնը համեմատութեամբ միւս քրիստոնեայ եկեղեցիների կանոնների և եկեղեցական իրաւունքի հետ (էջ. 23)։ Բացի դրանից թէ *положение*-ն և թէ թիւրքահայերի սահմանադրութիւնը, կազմուած լինելով մեր եկեղեցական կանոնների և պատմական աւանդութիւնների ոգով, չեն կարող ծառայել իբրեւ ինքուրոյն աղբիւր քննական հետազոտութեան համար։

Հայոց եկեղեցական իրաւունքի ծրագիրը հեղինակը յանձն է առել մշակել, ինչպէս ինքը վկայում է, հետեւելով *архим. Иоаннъ* ի և *Сokolовъ* ի ուղղութեան. բայց գրքի ներածութիւնից չէ երևում, ինչպիսի գերադասելի է այդ երկու գործերի ուղղութիւնը. մնում է ենթադրել, որ Ն. Վ. Մելիք-Թանգեանը ծանօթ չէ այն գրուածքներին, որոնք բողոքական և կաթոլիկ աշխարհի եկեղեցական գրականութեան նշանաւոր երկերն են կազմում. այդ հանգամանքը հեղինակի գրուածքին տալիս է որոշ նախով աշակերտական փորձի բնաւորութիւն. բայց դա արդեօք բաւական է լուսաբանելու համար այն կնճռոտ խնդիրները, որոնք հետազոտողից նախ և առաջ պահանջում են որոշ գիտական պաշար։

Բայց և այնպէս մենք չենք կարող ժխտել և այն, որ Ն. Վ. Մէլիք-Թանգեանի գիրքը, անփոփոխով իր մէջ եկեղեցագիտութեան վերաբերեալ պատմական նիւթը, ծանօթացնում է ընթերցողին առաքելական, տիեզերական և ազգային ժողովների կանոնների և աւանդութիւնների հետ, որով կառավարւում էր եկեղեցին իր ներքին և արտաքին յարաբերութիւնների մէջ քրիստոնեայ աշխարհի հետ և որով որոշւում էր նրա *modus vivendi*. այդ տեսակէտից հեղինակի հրատարակած գիրքը կարող է ծառայել իբրեւ մի ձեռնարկ եկեղեցագիտութեամբ պարագլուհների համար։